

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Արարատի համայնքապետարան

«Արարատ համայնքի կոմունալ ծառայություն»

բյուջետային հիմնարկ

ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի համար
կենտրոնացված կոշտ կենցաղային թափոնների
աղբավայրի

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող

«Քոնսեկորդ» ՍՊԸ տնօրեն



Վ. Թևոսյան

ԱՐԱՐԱՏ - 2024

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	4
1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ _____	5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	8
2.1 Տեղադիրքը _____	8
2.2 Կլիմայական պայմանները _____	13
2.3 Օդային ավազան _____	16
2.4 Ջրային ռեսուրսներ _____	17
2.5 Հողածածկ _____	19
2.6 Կենսաբազմազանություն _____	20
2.6.1. Բուսականություն _____	20
2.6.2. Կենդանական աշխարհ _____	21
2.7. Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ _____	21
2.8. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ _____	22
2.9. Ազդակիր համայնք _____	23
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ _____	24
3.1. Ընդհանուր տեղեկատվություն _____	24
3.2. Գոյություն ունեցող իրավիճակի նկարագրություն _____	25
3.3. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ _____	28
4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ _____	30
4.1. Ջրոյական տարբերակ _____	30
4.2. Քննարկվող տարբերակներ _____	30
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	31
5.1. Մթնոլորտային օդ _____	32
5.2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա _____	36
5.3. Աղմուկ և թրթռում _____	37
5.4. Հողածածկ _____	38
5.5. Երթևեկություն _____	38
5.6. Կենսաբազմազանություն _____	38
5.7. Սանիտարապաշտպանիչ գոտի _____	38
5.8. Աղբավայրի փակման ծրագիր _____	39
5.9. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն _____	40
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	41
6.1. Ընդհանուր դրույթներ _____	41
6.2. Մթնոլորտային օդ _____	41
6.3. Ջրային ռեսուրսներ _____	43
6.4. Հողային ռեսուրսներ _____	43

7. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	44
7.1. Ընդհանուր դրույթներ	44
7.2. Հողային ռեսուրսներ	45
7.3. Ջրային ռեսուրսներ	45
7.4. Անբարենպաստ պայմաններում և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները և ծրագրերը	46
7.5. Սոցիալական ազդեցության մեղման միջոցառումներ	48
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	48
8.1. Բնապահպանական կառավարման պլան	48
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	50
8.2. Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ ծրագիր	52
8.3. Մոնիթորինգի տեխնիկական նկարագրությունը	52
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	54
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Անշարժ գույքի պետական գրանցման վկայականներ	55
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Տեղադիրքի կոորդինատային տվյալներ (WGS-84)	67
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Փորձագննման հաշվետվություն	73

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ներկայացվող գործունեության շրջանակներում նախատեսվում է ՀՀ Արարատի մարզի կոշտ կենցաղային թափոնները տեղափոխել Արարատ համայնքի տարածքում գործող աղբավայր: Աղբավայրի շահագործումը իրականացնում է Արարատի մարզպետաչանի «Արարատ համայնքի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկը, որը հանդիսանում է սույն գործունեության ձեռնարկողը:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև 2023թ.-ին փոփոխված օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը նկարագրում է նախատեսվող գործողությունները, ելակետային բնապահպանական և սոցիալական պայմանները:

Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ գրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող, նվազեցնող կամ բացառող միջոցառումները:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր, որում մանրամասն նկարագրված են պատասխանատուները և կատարողները:

Սույն գործունեության ձեռնարկող է «Արարատ համայնքի կոմունալ ծառայություն» ԲՀ: Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան փողոց, շենք 65:

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքները ներկայացված են ստորև.

ՀՀ Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենսգիրքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

ՀՀ Ջրային օրենսգիրք (2002)

Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենսգրքից բխող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Օրենսգիրքը սահմանում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները:

ՀՀ Անտառային օրենսգիրք (2005)

Օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության

ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրով:

Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը:

Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիթորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիթորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ., վերջին փոփոխությունը՝ 07.12.2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014թ., փոփոխված՝ 03.05.2023թ.)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական

փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

Համաձայն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի բ) ենթակետի. «15000 եւ ավելի բնակչության սպասարկման համար կամ օրական 10 տոննա եւ ավելի աղբ ընդունող աղբավայրերի կառուցում կամ շահագործում կամ կենցաղային թափոնների վերամշակում» գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի շարքին:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք (2014թ.)

Սույն օրենքը կարգավորում է ՀՀ-ում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները:

Գործունեությունը կարգավորվում է նաև այլ իրավական ակտերով, որոնցից հիմնականներն են.

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք

Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք

“Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք

“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,

«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:

«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ

կառավարության 2006 թվականի հունիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշումը:

«Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր /ընդունված ՀՀ ԱՆ նախարարի 2002թ. մարտի 6-ի N138 հրամանով/:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկը ՀՀ տարածում կիրարկելու մասին» N321 -Ա հրամանը և աղբավայրի կառուցումն ու շահագործումն իրականացնել իրականացնել սույն հրամանի պահանջներով,

ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N64-Ն որոշումը և ստորերկրյա ջրերի պահպանությունը ապահովելու նպատակով առաջնորդվել ՀՀ Ջրային օբյեկտների և սույն որոշման պահանջներով:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂԻ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Տեղադիրքը

Ներկայացվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի վարչական տարածքում:

Արարատ համայնքը գտնվում է մարզի հարավային մասում: Սահմանամերձ են Երասխա, Պարույր Սևակ, Զանգակատում, Լանջառ բնակավայրերը: Համայնքի կենտրոն՝ Արարատ քաղաքը գտնվում է մայրաքաղաք Երևանից 42 կմ հարավ-արևելք, և Արաքս գետից 7 կմ արևելք՝ Հայաստան-Թուրքիա սահմանին: Այն Արարատի մարզի կարևոր քաղաքներից է, որը տեղակայված է Երևան-Երասխա մայրուղու վրա, մարզկենտրոն Արտաշատից 19 կմ դեպի հարավ: Հայաստանի արևելյան հատվածում՝ զբաղեցնելով 3,5 քմ կմ տարածք¹:

Աղբավայրը գտնվում է Արարատ քաղաքից մոտավորապես 940 մ, Ավշար գյուղից՝ 2 կմ, Այգեվան գյուղից 2.5 կմ հեռավորության վրա: Աղբավայրի

¹ <https://araratcity.am/>

մոտեցման հիմնական ճանապարհը հողագրունտային ճանապարհ է: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Հայցվող տարածքը եզրագծվում է (ARMREF 02) WGS-84 համակարգի կոորդինատներով, որոնք ներկայացված են Հավելված 2-ում:

Աղբավայրի տարածքի կենտրոնական մասի աշխարհագրական կոորդինատները բերված են ստորև.

- 39°51'59.91"N
- 44°42'16.47"E




Նկար 1. Տեղանքի իրադրային սխեմա

Ռելիեֆը և գեոմորֆոլոգիական պայմանները


Արարատ քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 818 մ բարձրության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից տարածքի ռելիեֆը կառուցվածքային այլուվիալ-պրոյուվիալ նախալեռնային թույլ թեք տիպի է:

Նախատեսվող գործունեություն տարածքի ռելիեֆը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձերակներով մասնատված:



Նկար 2. Ռելիեֆի ձևագրական տիպերը



Նկար 3. Մակերևութի գերակշռող թերություններ

Սեյսմոլոգիա

ՀՀ գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում: Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքուռյան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված զոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աբերալի, Շիրակ-Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները:

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀԸՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի սահմանված են չափանիշներ, համաձայն որի, ըստ ուժգնության աճող հաջորդականության առկա են՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներ, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների:

Նախատեսվող գործունեության տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝ $a=300$ սմ/վրկ², $A=0.3g$:

Աղյուսակ 2.1. Օդի ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արարատ	-3.1	0.2	6.9	13.4	18.1	22.6	26.4	26.0	21.1	13.8	6.2	0.0	12.6	-31.6	42.6

Աղյուսակ 2.2 Օդի խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Արարատ	78	71	60	57	55	49	45	46	50	62	72	78	60	78	63	45	32

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արարատ	17	18	24	36	36	21	10	7	8	18	21	17	233	97	136
	26	34	26	31	34	37	20	31	28	32	35	28	37		

Աղյուսակ 2.4. Չյան ծածկույթը

Բնակավայրի անվանումը	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, մմ
Արարատ	35	28	61	37

Աղյուսակ 2.5. Քամու պարամետրերը

Բնակավայրի անվանումը	Սամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անդրրի կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը,մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-ձետրվար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային(Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արարատ	Հունվար	16	3	8	18	10	5	11	29	50	1.3	Հս	2.6	ՀվԱրլ	2.7
		1.9	1.6	1.7	2.7	2.1	1.5	1.9	2.2						
	Ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2.3				
		2.7	2.3	2.7	3.4	2.8	2.7	2.4	2.8						
	Հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2.3				
		2,6	2.7	2.2	2.7	2.2	2.1	2.6	3.0						
Հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1.5					
	2.3	1.8	1.7	2.3	2.0	1.9	2.1	2.5							

2.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: ՊՈԱԿ-ը մշտական վերահսկողություն է կատարում 16 ստացիոնար դիտակայանների միջոցով, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

2022 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2022 թվականին 2021 թվականի համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում հիմնականում բարձրացել է ազոտի երկօքսիդի պարունակությունը²:

Արարատ քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 12 դիտակետ և 1 դիտակայան: 2022 թվականին Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 23%-ում դիտվել է փոշու, 1.3%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 3.2%-ում՝ ազոտի երկօքսիդի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից:

Նախորդ տարվա համեմատությամբ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան նվազել է 25%-ով, փոշու կոնցենտրացիան՝ 4%-ով, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան ավելացել է 13%-ով:

2022թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը ըստ փոշու միջինից ցածր մակարդակի է՝ 0.97:

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու կոնցենտրացիայի աճման տենդենց: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում արդյունաբերությունը:

² <http://www.armmonitoring.am>

Աղյուսակ 2.6. Արարատ քաղաքում մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի (մգ/մ³) փոփոխությունները, 2018-2022թթ.

Նյութի անվանում	Բնութագրիչ	Տարեթիվ					Տեղեկ
		2018	2019	2020	2021	2022	
Փոշի	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.068	0.125	0.083	0.099	0.097	0.003
	Փորձանմուշների քանակ	353	355	338	357	354	

2.4. Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Վեդի գետն է:

Վեդին գետ է Հայաստանի Արարատի մարզում՝ Արաքսի ձախակողմյան վտակն է: Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի ծայր հարավում ընկած Մանկունք լեռնագագաթի հարավարևելյան լանջերի՝ մոտ 2700 մ բարձրություններից: Հոսքի ընդհանուր ուղղությունը հարավարևմտյան է: Վերին հոսանքում գետն ունի լեռնային բնույթ: Ստորին հոսանքում անցնում է Արարատյան հարթավայրով ու թափվում Արաքսը Եղեգնավան գյուղից մոտ 2 կմ հարավ՝ ծովի մակարդակից մոտ 810 մ բարձրության վրա: Վեդիի երկարությունը 58 կմ է, ջրահավաք ավազանի մակերեսը 633 կմ², որի մի մասը մտնում է Խոսրովի անտառ արգելոցի մեջ: Խոշոր վտակներից են Մանկունքը, Սպիտակաջուր, Խոսրովը, Շաղափը ու Կոտուցը (Կետուզայ) (վտակները ներկայացված են ըստ Վեդիի մեջ թափվելու հերթականության):

Ջրի միջին տարեկան ծախսը մոտ 2,3 մ³/վրկ է, հոսքը՝ մոտ 72 միլիոն մ³: Մնումը հիմնականում հալոցքային (47%), ստորերկրյա (42%) ու անձրևային է: Հորդանում է մարտից մինչև հունիս, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 70%-ը: Ջուրը օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով: Սակավաջուր տարիներին ու ոռոգման շրջանում գետը հաճախ Արաքսին չի հասնում³:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը ևս վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման

³ <https://hy.wikipedia.org/>

նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք (ՁԿՏ)

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արարատ քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով, մանգանով և այլումիով: Գետի մոտակա հատվածի հեռավորությունը աղբավայրից ուղիղ գծով կազմում է 2.5 կմ:

Նկար 5.



2.5. Հողածածկ

Հողը բնական գոյացություն է, կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով: Հողառաջացնող գործաններն են աշխարհագրական, գեոմորֆոլոգիական, կլիմայական պայմանները, լանդշաֆտը, բուսական և կենդանական աշխարհի և մարդու ներգործությունը:

Տարածաշրջանում հողածածկը հիմնականում կիսաանապատային, գորշ տիպիկ մնացորդային կարբոնատային տեսակի է: Հողերի էրոզվածությունը VI կարգի է՝ 70%-ից ավել:

Անմիջապես աշխատանքների տեղամասերում հողածածկը վնասված է, տարածքը մասնակիորեն ծածկված է անկազմակերպ եղանակով բերված աղբով:



Նկար 6. Հողային տիպեր

Անմիջապես ներկայացվող տարածքում հողերի ադոտովածությունը որոշելու համար կատարվել է նմուշառում՝ գործունեության տարածքի մի քանի կետերից, նմուշը ընդհանրացվել է և տեղափոխվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլերնութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա:

Լաբորատոր անալիզի պատասխանները ներառվել են Հավելված 2-ում:

2.6. Կենսաբազմազանություն

Արարատ քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

2.6.1. Բուսականություն

Տարածքը իրենից ներկայացվում է կիսաանապատային չոր բուսականությամբ:

Բուսականության հիմնական ֆոնը օշինդրային և հազարատերևուկային կիսաանապատային համակեցությունն է՝ Օշինդր բուրավետ (*Artemisia fragrans*) և Հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*) տեսակների գերակշռության

Բուսաաշխարհագրական առումով հետազոտվող տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանի սահմանում: Բացի ֆոնային տեսակներից, բնական կիսաանապատային բուսականությունը հարուստ է բարդաձողկավորների այլ տեսակներով (*Helichrysum armenium* - Անթառամ հայկական, *Xeranthemum squarrosum* - Անմեռուկ չոված, *Chondrilla juncea* - Խիժաճարճատուկ կնյունանման և այլն), հացազգիների ընտանիքին պատկանող տեսակների մեծ քանակով (*Aegilops cylindrica* - Այծակն գլանաձև, *Bromus japonica* – Ցորնուկ ճապոնական, *Taeniatherum crinitum* - Երիզաքիստ երկարամազ, *Poa bulbosa* – Դաշտավլուկ սոխուկավոր), Խաչաձողկավորներին պատկանող *Lepidium vesicarium* - Կոտեմ բշտիկավոր տեսակով և այլն:

Համաձայն ՀՀ բույսերի Կարմիր գրքի տվյալների, տարածաշրջանում գրանցված են մի շարք բուսատեսակներ, մասնավորապես՝ Օջան Օջեի (*Salsola aucheri*), Օջան Թամամշյանի (*Salsola tamamschjanae*), Օջան թաղիքային *Salsola tomentosa*), Տանձենի Ֆյոդորովի (*Pyrus theodorovi Mulk*), Խոնդատ մերկացողուն (*Verbascum nudicaule*), Կարմրան ութառեջ (*Tamarix octandra*), Վարդատերեփուկ Իլլինի (*Amberboa iljiniana Grossh*),

Անմիջապես ներկայացվող տարածքում նշված բուսատեսակներից որևի մեկի վերաբերյալ գրականության տվյալներ չկան: Բացի դա տարածքում առկա է մարդկային գործոն՝ տեղ-տեղ առկա են անկազմակերպ եղանակով բերված աղբի կույտեր:

2.6.2. Կենդանական աշխարհ

Տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Հանրապետության տարածքում լայնորեն տարածված ռեսակներից կարող են հանդիպել երկկենցաղներից Փոփոխական դողոշը (*Bufo variabilis*), որը նախկինում հայտնի էր Կանաչ դողոշ անունով: Այս տարածքում հանդիպող հավանական տեսակներից է նաև՝ Փոքրասիական ճագարամուկը (*Allactaga williamsi Thomas*), Անդրկովկասյան կուրամկնիկ (*Ellobius lutescens Thomas*), Պարսկական ավազամուկ (*Meriones persicus*):

Տարածքում հանդիպում են նաև սողուններ (Շտրաուխի մողեսիկ-*Eremias strauchi Kessler*), թռչուններ (Կապույտ քարակեռնեխ - *Monticola solitarius*, Սևախայտ քարաթռչնակ - *Oenanthe hispanica*, Տնային ճնճղուկ - *Passer domesticus*), կաթնասուններ (Գորշ նապաստակ - *Lepus europaeus Pallas*, Թփուտային դաշտամուկ - *Microtus majori*, Սովորական աղվես - *Vulpes vulpes*)

Պետք է նշել, որ աղբավայրի տարածքի հողածածկը խախտված է և այստեղ բացակայում են վայրի կենդանիների բնակատեղիները:

2.7. Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ:

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059 որոշման, ՀՀ Արարատի մարզում գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր վիրապ» պետական արգելավայրերը:

Նախատեսվող գործունեության տարածքին առավել մոտ գտնվում է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, որը գտնվում է ավելի քան 2 կմ հեռավորության վրա:

2.8. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ

Բնության հուշարձանը գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտ է, որի պահպանության ռեժիմը սահմանվում է ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով:

ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքում գտնվող բնության հուշարձանների ցանկը: Ցանկում ընդգրկված են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական բնության հուշարձաններ: Նշված որոշման համաձայն Արարատ քաղաքի տարածքում է գտնվում «Աղակալած ճահճուտ» (Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա) կենսաբանական հուշարձանը, որը սակայն չի առնչվում նախատեսվող գործունեության տարածքի հետ:

ՀՀ Կառավարության 2004թ. հունվարի 24-ին թիվ 65 որոշմամբ Արարատի մարզի հուշարձանների պետական ցանկում Արարատ քաղաքում հաշվառվել են հետևյալ պատմամշակութային հուշարձանները, որոնք գործունեության իրականացման արդյունքում ազդեցության չեն ենթարկվի, քանի որ գտնվում են զգալի հեռավորության վրա:

Արարատ քաղաք

ԴԱՍԲԱՐԱՆԱԴԱՇ	մթա 2-1 հզմ	1 կմ հս	ձգվող ժայռոտ բլրաշղթայի վրա
ՀՈՒՇԱՐՁՆ ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈՒՐ	1992 թ.	ք. մ.	քանդ.՝ Ի. Գրիգորյան
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏՈՒՄ ՋՈՂՎԱԾՆԵՐԻՆ	1985 թ.	ք. մ.	քանդ.՝ Ս. Մեիրաբյան Ճարտ-ներ՝ Ս. Դերձյան Օ. Բերբերյան Լ. Խաչատրյան

2.9. Ագոակիք համայնք

Արարատի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավ-արևմուտքում:

Մարզը հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արմավիրի մարզին, հյուսիսից՝ Երևան քաղաքին և Կոտայքի մարզին, արևելքից՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերին, հարավից՝ Ադրբեջանին, իսկ հարավարևմուտքից, պետական սահմանով՝ Թուրքիային:

Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: 2022թ. մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 11.2 %,
- գյուղատնտեսություն 14.7 %,
- շինարարություն 5.8 %,
- մանրածախ առևտուր 3.8 %,
- ծառայություններ 1.6 %:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որը հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Արարատի մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ երկաթուղին: Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծխախոտային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունն այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Մարզի բազմաձյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Արարատ քաղաքը (2023թ. տարեսկզբին՝ 20.5 հազ. մարդ) հիմնադրվել է 1936թ.-ին: Տեղակայված է Երևան-Նախիջևան ճանապարհի վրա, Երևան քաղաքից մոտ 48 կմ հարավ-արևելք: Մարզկենտրոնից ունի 19 կմ հեռավորություն:

Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ գտնվում է հանրապետության երկու ցեմենտի գործարաններից մեկը, որը ստեղծվել է տեղի կրաքարի հարուստ հանքավայրի հիման վրա: Քաղաքում կան նաև գինու-կոնյակի և պահածոների արդյունաբերության ձեռնարկություններ, որտեղ արտադրվում է գինի, կոնյակի սպիրտ, մրգերի, բանջարեղենի պահածոներ: Ունի զարգացած գյուղատնտեսություն: Այստեղ գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն խաղողի, պտղատու այգիները, վարելահողերը:

Զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, ինչպես նաև կաթնամսատու ուղղության անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Ունի դպրոցներ, գրադարաններ, մանկապարտեզներ, երաժշտական դպրոց, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց:

Արարատ գյուղը (մակերես՝ 44.11կմ², բնակչություն՝ 8043 մարդ)⁴ գտնվում է Երևան-Նախիջևան մայրուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 20 կմ հեռավորության վրա:

Գյուղը տեղադրված է ծովի մակարդակից 856 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Գյուղում կան կվարցի և օնիքսային սև մարմարի պաշարներ, որի մշակումից ստացվում է դեկորատիվ սալիկներ:

Գյուղն ունի 3 դպրոց, մանկապարտեզ, կապի հանգույց, ամբուլատորիա, Սպարապետի անվան թանգարան:

Տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Բնակչությունը զբաղվում է նաև այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, մեղվաբուծությամբ:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ընդհանուր տեղեկատվություն

Աղբավայրը սանիտարական կառույց է, որը նախատեսված է կոշտ կենցաղային թափոնների պահեստավորման, մեկուսացման և հեռացման /թաղման/ համար՝ ապահովելով պաշտպանություն հողի, մթնոլորտի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումից, կանխելով պաթոգենների, կրծողների և միջատների տարածումը:

Ներկայացվող տարածքի մակերեսը՝ 6.06 հա: Տարածքի նպատակային նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, օգտագործման նպատակը՝ աղբավայր (վկայականները կցվում են հաշվետվությանը):

⁴ <http://ararat.mtad.am/>

Ինչպես ՀՀ գրեթե բոլոր համայնքներում, այնպես էլ Արարատի համայնքում բացակայում է աղբի և թափոնների կառավարման համակարգերը: Համակարգի բացակայությունը առաջացնում է մի շարք հիմնախնդիրներ:

Աղբավայրում նախատեսվում է ընդունել բնակչության կողմից սպառման գործընթացում բնակելի տարածքներում առաջացած, սանիտարական մաքրման արդյունքում առաջացած (համայնքի սան. մաքրման ծառայության կողմից հավաքված և աղբավայր տեղափոխված), իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած թափոնները, որոնք բաղադրությամբ նման են կոշտ կենցաղային թափոնների:

Աղբահանությունը իրականացվելու է համայնքի բնակավայրերից, մասնավորապես՝ քաղաք Արարատը և ՈԿՖ Բանավան, գյուղ Արարատ:

Համայնքում հիմնական աղբահանությունը իրականացվում է «Արարատ համայնքի կոմունալ ծառայություն» ԲՀ-ի միջոցով: Նախատեսվում է աղբահանության համար օգտագործել հետևյալ տեխնիկական միջոցները՝ ZIL MMZ - 45021/բեռնատար/, ZIL MMZ - 4502/բեռնատար/, ZIL MMZ-554M /բեռնատար/, ZIL 433352 /բեռնատար/, GAZ - 33098-837/աղբահան/, GAZ - 330900-1354 /աղբահան/:

Բնակավայրերում աղբը հավաքվում է աղբարկղերում և ըստ կուտակման տեղափոխվելու է աղբավայր: Որոշակի ժամանակացույց չկա: Աղբի կանոնակարգված տեսակավորում չի կատարվում, սակայն բնակիչներից ոմանք փաստացի առանձնացնում և հանում են մետաղների, որոշ պլաստիկ իրերի և մի քանի այլ մնացորդներ:

Քաղաքաշինական նորմերով կենցաղային թափոնների փոքր աղբավայրերի համար նախատեսված սանիտարապաշտպանիչ գոտին կազմում է 500մ: Փաստացի այդ սահմաններում որևէ բնակավայր, սպասարկման կամ հանրային այլ օբյեկտներ չկան: Մոտակա բնակելի տունը գտնվում է մոտավորապես՝ 860մ հեռավորության վրա:

Աղբավայրի շառայման ժամկետը կախվախ է ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից իրականացվող աղբահանության ծրագրերի: Եթե Արարատի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի ներգրավումը նշված ծրագրերում չիրականացվի, աղբավայրի ծառայման ժամկետը կարող է լինել 15 – 20 տարի:

3.2. Գոյություն ունեցող իրավիճակի նկարագրություն

Ներկայում աղբավայրի համար հատկացված տարածքը մասնակիորեն ծածկված է անկազմակերպ եղանակով բերված աղբով: Տարածքը հարթ չէ, առանձին մասերում առկա են բլրանման հատվածներ, որոնց վրա կան մի քանի փոքր թփերով ծածկված տեղամասեր: Ծառեր չկան:

Տարածքի որոշ մասերում առկա է բերրի հողաշերտ, որոնց հզորությունը տատանվում է 8 – 20 սմ սահմաններում:

Աղբի տակ գտնվող տեղամասերում գործնականում բերրի հողաշերտ չի պահպանվել:

Ստորև բերված են մի քանի լուսանկարներ.



Նկար 7. Աղբավայրի ընդհանուր տեսարանը



Նկար 8. Աղբի առկա կուտակումները



Նկար 9. Բլրային տեղամասերը:

Աղբավայրի տարածքում առկա են պահակակետ, ջրի պահեստավորման բաքեր, կենցաղային շինություն, որտեղ կան սալիկապատ սանհանգույցներ, հանգստի և սննդի ընդունման սենյակներ, ինչպես նաև առանձին շինություն, որը կառուցվել էր աղբի տեսակավորման համար, սակայն երբեք չի գործել ֆինանսների պակասի պատճառով:

3.3. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Աղբավայրում իրականացվում է օրական 9 տոննա /9030կգ/ կենցաղային և սանիտարական մաքրման արդյուքում առաջացած թափոնների ընդունում և պահեստավորում /թաղման/ համար: Ծառայությունը մատուցվելու է Արարատի մարզի Արարատ քաղաքին և ՈԿՖ Բանավան, գյուղ Արարատին:

Աղբավայրի թափոնների տարածքը կազմում է 6.06 հա: Նախատեսված տարածքն ամբողջությամբ կշահագործվի փուլ առ փուլ՝ կապված նաև ռելիեֆային առանձահատկություններով: Պետք է նշել, որ տեղանքում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել:

Համայնքը նախատեսում է իրականացնել բնակչության հետ տարվող աշխատանքներ, աղբահանության և տեսակավորման համակարգ, աղբավայրերի ենթակառուցվածքների բարելավում:

Ներկայումս աղբավայրի տարածքում առկա են անկանոն ձևով տեղադրված աղբի մի քանի կույտ: Աղբավայր են տեղափոխվում բազմաթիվ տեսակի թափոններ և աղբի տեսակներ, որոնց թիվը հասնում է մի քանի հարյուրի:

Հիմնական տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներն են.

- Առաջին փուլում կիրականացվի անկանոն ձևով տեղադրված աղբի հավաքում և տեղափոխում,
- Աղբավայրը կցանկապատվի մետաղական ցանցով,
- Առկա և նոր ստացվող աղբի տեղափորման համար աղբավայրում փորվում են բջիջներ՝ 10 – 12 մ² մակերեսով և 2.5 մ խորությամբ,
- Բջիջների հատակը կկապապատվի կամ կտեղադրվեն գեոմեմբրանային ծածկեր: Հաշվի առնելով հողի կավի բարձր պարունակությունը, նախընտրվելու է առաջին տարբերակը,
- Պահանջվող 2.5 մետրը բարձրության ապահովման և խտության ստուգման նպատակով տեղադրվում են չափման սյուներ /ռեպետներ/,
- Կկառուցվեն ստորգետնյա առվակներ/ավազաններ դեպի ցածրադիր վայրեր
- Բոլոր բջիջները կմիացվեն նախատեսվող առվակներին/ավազանին ստորգետնյա պլաստիկ խողովակներով/
- Ջովածքը հավաքվում է աղբավայրի ցածրադիր գոտում նախատեսվող առվակներում/ավազանում: Այստեղ նաև հավաքվում են անձրևաջրերը:
- Ավազանը կկազմակերպվի աղբավայրի ցածրադիր վայրում՝ օգտագործելով բնական իջվածքները: Ավազանի ծավալը նախատեսված է 100 – 120 մ³,
- Աղբավայրը կունենա մուտքի և ելքի հսկիչ կետ,

- Մեքենաների անիվների ախտահանման կետ, /մեքենաների ելքի դեպքում կատարվում է անիվների պարտադիր ախտահանում ԼԻԶՈԼ տեսակի 3% նյութով /, որի արդյունքում արտահոսք չի առաջանում,

- Չոր ամառային սեզոններին թափոնները խոնավացվում են, բարձրացնելով դրանց խտացման հզորությունը, հրդեհները կանխելու համար: 1մ³ թափոնի համար ջրի մոտավոր ծախսը 10 լիտր է: Խոնավացումը նախատեսվում է իրականացնել վերը նշված ավազանում հավաքվող ջրով,

- Անհրաժեշտության դեպքում, նախնական պահանջով, հնարավոր է թափոններ ընդունել հանգստյան օրերին և տոն օրերին:

- Աղբավայրում նախատեսված է տեղադրել պահուստային ջրի տարողություն:

Նախատեսվող աշխատանքները կսկսեն անմիջապես համապատասխան թույլտվություններ ստանալուց հետո և կիրականացվեն աղբի ընդունման հետ համատեղ, շինարարության առանձին ժամկետ չի նախատեսվում:

Սկզբնական աշխատանքները կներառեն ցանկապատի տեղադրում ցանցի տեսքով, առկա աղբի կուտակում որոշակի հատվածում, առաջին բջիջի փորում, լցում և ծածկում, ցածրադիր կետում ավազանի համար նախապատրաստում, կավապատում կամ գեոմեմբրանի տեղադրում, առվակների փորում և այլն: Նշված աշխատանքները կկատարվեն հետևյալ ժամանակացուցույցով.

- ցանկապատ՝ 2024 – 2025 թ.թ.
- ավազան – 2025 թ.
- բջիջներից դեպի ավազան առուներ՝ ըստ բջիջների պատրաստման:

4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

4.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ նշված գործունեությունը չի իրականացվում, որևէ փոփոխություն չբնակա միջավայրում տեղի չի ունենում: Այս դեպքում՝

- Կշարունակվի աղբավայրի անկակոն և անկազմակերպ շահագործումը,
- կենսամիջավայրի վրա ներգործությունը և ճնշում չի փոխվի:

4.2. Քննարկվող տարբերակներ

Քննարկման համար առկա նախապայմանը հիմնված է գոյություն ունեցող վիճակի և համայնքի ֆինանսական կարողությունների վերլուծության վրա:

Քննարկվել են երկու տարբերակ.

- Նոր ժամանակակից աղբավայրի կառուցում և գոյություն ունեցող աղբավայրի դանդաղ կոնսերվացում.
- Գործող աղբավայրի բարեկարգում և ըստ հնարավորության համապատասխանացում սանիտարական պահանջներին:

Առաջին տարբերակի դրական կողմերն են.

- Աղբի տեսակավորում,
- Բարձր համապատասխանություն սանիտարական պահանջներին:

Բացասական կողմերն են.

- Զգալի ֆինանսական ներդրումների անհրաժեշտություն,
- Նոր տարածքների պահանջ:

Երկրորդ տարբերակի դրական կողմերն են.

- Ծախսերի իրատեսական մակարդակ,
- Արդեն իսկ օգտագործվող տարածքների առկայություն,
- Նոր շինարարության անհրաժեշտության բացակայություն:

Բացասական կողմերն են.

- Աղբի տեսակավորման աշխատանքների իրականացման համար ներկա պայմաններում հնարավորությունների պակաս,
- Մեծ քանակությամբ կուտակված աղբի առկայությունը դժվարացնում է բջիջների պատրաստումը,
- Ազատ և զբաղեցված տարածքների խճճվածությունը:

Վերլուծելով վերը բերված հանգամանքները և իրատեսորեն գնահատելով համայնքի հնարավորությունները, ընտրվել է երկրորդ տարբերակը, որը նաև չի բացառում հետագայում, հնարավորության դեպքում, ավելի բարձր մակարդակի պահանջներին համապատասխանող պայմանների ապահովումը:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աղբավայրի շահագործման ընթացքում ազդեցությունը կապված է աղբի տեղափոխման, կուտակման, գտման և տեղակայման աշխատանքների հետ:

5.1. Մթնոլորտային օդ

Աղբավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի վրա ազդեցությունը պայմանավորված է երեք գործոններով.

- Բջիջների պատրաստման ընթացքում հանվում է հողի որոշակի զանգված, որը փոխվում է բջիջի մոտ, բջիջը լցվում է աղբով, որը ծածկվում է հանված հողով, որի ընթացքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ:
- Բջիջների փորումը, աղբի լցումը և հողով ծածուկը կատարվում է էքսկավատորի, բուլդոզերի կամ տրակտորի միջիցով, որի ժամանակ առաջանում են վառելիքի այրման արտանետումներ:
- Աղբի քայքայման ընթացքում առաջանում է աղբավայրային գազ /կենսագազ/: Խմորումը կլինի անաերոբ, քանի որ աղբը հարթեցումից հետո կծածկվի հողային շերտով և հետագա գործընթացները տեղի կունենան առանց թթվածնի ազդեցության:

Ա. Անօրգանական փոշի

Մեկ բջիջի և հարակից առվակի կառուցման համար միջին հաշվով հանվում է 15 մ³ հող: Նախատեսվում է օրական կառուցել մեկ բջիջ:

Տարեկան՝ 365 բջիջ, ըստ որի հանվող հողի ծավալը կկազմի՝

$$365 \text{ օր/տարի} \times 15 \text{ մ}^3/\text{օր} = 5475 \text{ մ}^3/\text{տարի}:$$

Այդ ընթացքում առաջացող փոշու քանակը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները առաջանում են հիմնականում հողային զանգվածի հանման և ետլիցքի ժամանակ:

Հաշվարկները կատարված են գործող մեթոդակարգի համաձայն /6/:

$$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600 \text{ գ/վրկ (բանաձև 1), որտեղ}$$

P₁ - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտներում, 0.05

P₂ – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P₃ - գործակից, որը հաշվի է առնում աղբավայրում քամու միջին արագությունը, 1.0

P₄ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6 (հաշվի առնելով բնական խոնավությունը և ջրցանի հանգամանքը)

P₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.8

P₆ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G – հողային զանգվածի քանակը, տ/ժամ:

Ըստ վերը բերված հաշվարկների՝ 5475 մ³/տարի, հաշվի առնելով տեսակարար կշիռը.

5475 մ³/տարի x 1.6 տ/մ³ = 8760 տ/տարի: Բջիջները կառուցվում են 365 օր, սակայն օրվա ընթացքում աշխատանքները կարող են տևել 0.5 – ժամ, կախված ստույգ վայրի ռելիեֆի առանձնահատկություններից: Տարեկան առավելագույնը՝ 365 ժամ:

Ժամում՝ 8760 տ/տարի : 365 ժամ/տարի = 24 տ:

$$Q_i = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.6 \times 0.8 \times 24 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3600 = 1.6 \text{ գ/վրկ:}$$

Արտանետումների տարեկան քանակը արդյունքում կկազմի՝

$$1.6 \text{ գ/վրկ} \times 365 \text{ ժամ/տարի} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 10^6 \text{ գ/տ} = 2.1 \text{ տ/տարի:}$$

Բ. Վառելիքի այրում

Տեխնիկական միջոցների շահագործման ժամանակ օգտագործված դիզելային վառելիքի արտանետումները հաշվարկվում են “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի⁵ հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 4.1-ում:

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Աղյուսակ 4.1.

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NOx	CH	ՑՕՄ	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Դիզվառելիքի տարեկան առավելագույն ծախսը կկազմի՝ 31 տ/տարի:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 4.2-ում: Աղյուսակում միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:

Աղյուսակ 4.2.

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/տարի
Շինարարական տեխնիկա	CO	36.4	1.13
	CH	8.4	0.26
	NOx	42.3	1.3
	ՊՄ	4.3	0.13

Ծծմբային անհիդրիդ

⁵ Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Քոռ ինվեստորի օֆ ենմիշոնս ին Երովի” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են էլնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2 \sum ks_b, \text{ որտեղ }`$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 31 տ/տարի

$$SO_2 = 2 \times 31 \times 0.002 = 0.124 \text{ տ/տարի:}$$

Արտանետումների ամփոփ քանակները բերված են աղյուսակ 3-ում:

N ^o	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումները, տ/տարի
1	Անօրգանական փոշի	2.1
2	Ածխածնի օքսիդ	1.13
3	Ածխաջրածիններ սահմանային	0.26
4	Ազոտի երկօքսիդ	1.3
5	Պինդ մասնիկներ /մուր/	0.13
6	Ծծմբային անհիդրիդ	0.124

Գ. Կենսագազ

Ըստ գրականության տվյալների կենսագազի հիմնական քանակները կսկսեն առաջանալ աղբավայրի շահագործումից մոտավորապես 3 – 5 տարի հետո:

Աղբավայրերում առաջացող կենսագազը հիմնականում պարունակում է ածխաթթու գազ և մեթան: Ստորև բերված են Նուբարաշենի աղբավայրում առաջացող կենսագազի քիմիական կազմի հետազոտության արդյունքները, կատարված ճապոնական “Շիմիզու” ընկերության կողմից 2004 – 2006 թվականներին:

Աղյուսակ 4.3. Նուբարաշենի աղբանոցի կենսագազի անալիզների արդյունքները

Նմուշառման կետի համարը	Մեթան, % ծավալային	Ածխաթթու գազ, % ծավալային	Թթվածին, % ծավալային	Ածխածնի օքսիդ, ppm	Ծծմբի երկօքսիդ, ppm
1	62	31	1.1	75	>100
2	61	29	1.2	68	>100
3	60	29	1.3	34	>100
4	59	30	1.7	60	>100
5	59	29	1.9	-	>100
Միջինացված	60.2	29.6	1.44	59.25	>100

Կենսագազի առաջացումը կարող է տևել մինչև 100 տարի:

Կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) աղբավայրում առաջացող կենսագազի հաշվարկները կատարվում են ըստ ԵՄ 2006 IPCC Guidelines for National Greenhouse Gas Inventories ձեռնարկի: Սակայն ձեռնարկում կիրառվող բանձները հաշվի են առնում բազմաթիվ գործոններ, ինչպես նաև աղբի քայքայման շարքը մինչև 100 տարի, որը կիրառելի չէ փոքր համայնքային աղբավայրերի համար: Այդ նպատակի համար առավել կիրառելի է Tabasaran-Rettenberger մոդելը:

Tabasaran-Rettenberger մոդելը թույլ է տալիս որոշել փոքր համայնքային աղբավայրերում կենսագազի կոնկրետ քանակությունը մեկ տոննա աղի համար և դրա ընդհանուր քանակությունը, որն առաջանում է ժամանակի որոշակի կետում: Բանաձևը նաև հաշվի է առնում այն հանգամանքը, որ առաջացած կենսագազի որոշակի մասը տարալուծվում է հողային շերտերում:

$$O_e = 1,868 \cdot C \cdot (0,014T + 0,28) \text{ մ}, (1)$$

որտեղ O -ը կենսագազի տեսակատար արտանետումն է ($\text{մ}^3/\text{տ}$ թափոններ);
 $1.868 - 1$ կգ օրգանական ածխածնից գոյացած կենսագազի քանակը, $\text{մ}^3/\text{կգ}$;

